



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք  
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 դեկտեմբեր 2017 թվականի N 25-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ  
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԵՐՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԱՌԱՋԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, 84-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N08-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ բաժնի 17-րդ կետի 1-ին ենթակետը՝ ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի կազմում ավագանու ներկայացուցիչ առաջադրել Արման Օհանյանին (համաձայնությամբ),

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից համայնքի տարածքում հասարակական կարգով գործող քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնի կազմում ավագանու ներկայացուցիչ առաջադրել Հայկ Վարդևանյանին (համաձայնությամբ),

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից համայնքի տարածքում հասարակական կարգով գործող կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական՝ այդ թվում երեխաների պաշտպանության, հարցերի խորհրդակցական մարմնի կազմում ավագանու ներկայացուցիչ առաջադրել Վահրամ Ապրեսյանին (համաձայնությամբ):

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ

2. ԱՊՐԵՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

3. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

4. ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ

5. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

6. ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ

7. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀԱԿՈՒ ԲԱԼԱՍՅԱՆ